# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-7

ք.Երևան «12» «12» 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Գալիմա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ.Հովհաննիսյանի, (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 07.05.2019թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-7 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.9 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկները 2019թ, հոկտեմբերի 15-ից անցել են սննդի հատկացման նոր համակարգի՝ պատրաստի սննդի ձեռքբերման ծառայության, ուստի անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել մատակարարվող սննդամթերքի քանակները: Հաշվի առնելով նշվածը, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ սննդամթերքի քանակները նվազեցնել, մասնավորապես՝

1) 15000 կգ «գազար» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 7560 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 1058400 (մեկ միլիոն հիսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվազեցվող քանակների չափով վերացել է «գազար» ապրանքատեսակի գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պայմանագրի գինը՝ կազմում 1041600 (մեկ միլիոն քառասունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 17-րդ, չափաբաժնի աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ՝ առանց տեխնիկական բնութագրի սյունակի (որը մնում է ամփոփոխ):

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-7 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և N1, N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
Ա. Ղազարյան

---

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Գալիմա>> ՍՊԸ
ք.Երևան,Մամիկոնյանց 8ա բն.4
ՀՎՀՀ 00128415
Հ/Հ 20506-22049091001
Բանկ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ
galima7777@mail.ru

Տնօրեն Գ.Հովհաննիսյան

---

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » « 12 » 2019 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-7 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | չափման միավորը | միավորի գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 17 | 03221110/2 | Գազար | ՀՀ շուկա | կգ | 140 | 1041600 | 7440 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 5000 | 3-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | 2440 | 4-րդ եռամսյակ |

*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Գալիմա>> ՍՊԸ
ք.Երևան,Մամիկոնյանց 8ա բն.4
ՀՎՀՀ 00128415
Հ/Հ 20506-22049091001
Բանկ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ
galima7777@mail.ru

Տնօրեն Գ.Հովհաննիսյան

Հավելված N 2
« 12 » « 12 » 2019 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 17 | 03221110/2 | Գազար | - | - | 700000 | 1041600 | 1041600 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն
Ա. Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Գալիմա>> ՍՊԸ
ք.Երևան,Մամիկոնյանց 8ա բն.4
ՀՎՀՀ 00128415
Հ/Հ 20506-22049091001
Բանկ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ
galima7777@mail.ru

Տնօրեն Գ.Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ